Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-1076[5]-19.01.2011-ՏՏ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19-րդ հոդվածի «16. Քաղաքաշինության բնագավառ» բաժնի «16.1», «16.2» և «16.3»-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«16.1	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և փորձաքննության յուրաքանչյուր ներդիրի համար՝ տարեկան	բազային տուրքի 40-ապատիկի չափով
16.2.	Շինարարության իրականացման յուրաքանչյուր ներդիրի համար՝ տարեկան	բազային տուրքի 80-ապատիկի չափով
16.3.	Շինարարության որակի տեխնիկական հսկողության յուրաքանչյուր ներդիրի համար՝ տարեկան	բազային տուրքի 50-ապատիկի չափով»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ առաջարկությունների

Առարկության, առաջարկության հեղինակը,	Առարկության. առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1	2	3	4
ՀՀ կառավարություն	«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում կատարել համապատասխան լրացում, համաձայն որի քաղաքաշինական փաստաթղթերի մշակմանը մասնակցած նախագծային կազմակերպությունները կամ անձինք չեն կարող կատարել կամ ներգրավվել իրենց կողմից մշակված նախագծերի փորձաքննությանը:	Ընդունվել է	«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածը լրացվել է 5-րդ մասով:
ՀՀ կառավարություն	«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում կատարել համապատասխան լրացում, համաձայն որի ՀՀ կառավարության սահմանած տեխնիկապես ոչ բարդ օբյեկտների շինարարության որակի տեխնիկական հսկողությունը, կառուցապատողի և շինարարություն իրականացնողի համաձայնությամբ կարող է փոխարինվել շինարարական աշխատանքների պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագրով:	Ընդունվել է	«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածը լրացվել է 6-րդ մասով:
	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում կատարել համապատասխան փոփոխություններ՝ հաշվի առնելով, որ քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և փորձաքննության, շինարարության իրականացման և շինարարության որակի տեխնիկական հսկողության գործունեությունների լիցենզավորման կարգերում կատարված փոփոխությունների համաձայն նշված գործունեությունների իրականացման համար լիցենզավորվող անձանց լիցենզիաների հետ տրամադրվելու են համապատասխան	Ընդունվել է	«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի «16. Քաղաքաշինության բնագավառ» բաժնում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

	ներդիրներ՝ ըստ ոլորտների:		
ՀՀ ԱԺ պատգամավոր Արայիկ Հովհաննիսյան	«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 7-րդ հոդվածի առաջին մասի 3) ենթակետը հանել:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ: